

առաջի սրբազնասուրբ սեղանոյն եւ ողբերգական ձայնիւ սկսան ի դիմաց Գերյարգոյ Աբբային առնել զբարեաւ մնայ ընդ եկեղեցւոյն, ընդ միաբանից, ընդ օտար քահանայից եւ ընդ ժողովուրդեան. եւ անտի բարձեալ մուծին ի ներքս ի դասն, յետ կոյս աւազ խորանին, ուր էր նախապատրաստեցեալ յինքենէ դերեղման իւր, եւ անդ սկսան օրհնել զհոգն, եւ զայլս զընթերցուածս եւ զաւետարանս ընթեռնուլ, եւ զպատուական մարմին նորա հանեալ ի դադաղէն եղին ի մէջ տապանակի: Եւ նախ քան զնեղն զնա ի տապանի՝ խաչանիչ ցանեալ զօրհնեալ հոգն ի վերայ, սկսան ասել Փառք ի բարձունս, եւ բեւեռեցին բեւեռօք զտապանակն, եւ այնպէս եղին ի դիր հանգստեան, եւ զվէմն եղին ի վերայ դերեղմանին:

Արդ, մահն Գերյարգելոյ Աբբային մերոյ եղեւ յամին 1749, Ապրիլի 27ին, ի յեօթներորդում ժամու դիշերոյ. եւ էր ինքն ամաց եօթանասուն եւ չորից, աւելի երկու ամօք եւ ոմամք աւուրք: Յետին հիւանդութիւնն դառնակսկիծ եւ սոսկալի, յորում եկաց միշտ ի մահճի, եղեւ ըստ թուոյ ամաց իւրոց. քանզի եկաց յայնմ հիւանդութեան եօթանասուն եւ չորս աւուրս: Եւ հաւատամ թէ զբաւարանն աստէն քաշեաց, քանզի մեծաւ ջերմեռանդութեամբ եւ յոյժ համբերութեամբ համակերպեաց զկամս իւր ընդ կամացն Աստուծոյ ի հիւանդութեան. զի ոչ երբեք տրտնջեաց եւ ոչ նշան տփուհանաց եցոյց, այլ բնան իրբու ի ձեռանէ

Աստուծոյ եկեալ վերընկալնոյր զնոսին, եւ ըմպէր ուրախութեամբ զմատուցեալ բաժակն ինքեան ի Տեառնէ իւրմէ:

Արդ, աւուրս ութ արարաք զայդող, նմանապէս ի հնդետասաներորդի աւուր եւ ի քառասներորդի աւուր, եւ միշտ պատարադողն յիշատակէին զնա ի մէջ պատարադին: Արդ, ընդ հանդիսաւոր թաղումն Գերյարգոյ Աբբային մերոյ ոչ միայն այնք՝ որք ներկայ դասն ի թաղումն նորա, այլ եւ բնաւ լսողքն զայնպիսի հանդիսաւոր թաղումն արարեալ ի մէջն, յոյժ սքանչացեալք էին եւ ասացեալք էին. Բարուք փոխանակ տրիտուր տեառն իւրեանց Աբբային աշակերտքն իւրեանց տուեալք են՝ առնելով նմա զմեծայարգ եւ հանդիսական թաղումն: Սարգիս արքեպիսկոպոսն Կեսարիոյ ափսոսացեալ է ընդ թաղումն իւրոյ վարդապետին, որ էր Պատրիարք Կոստանդնուպոլսոյ եւ ասացեալ՝ թէ զրեթէ տասներորդ մասն հանդիսութեանս այսորիկ ոչ արարաք մեք որդիքս վարդապետին մերոյ եւ պատրիարքի, եւ ոչ այնքան բազմութիւնք ժողովրդեան շարժեցան առնել զհանդիսաւոր թաղումն Պատրիարքին իւրեանց. սոքա դերախտիս Հօրն իւրեանց միշտ ի միտս իւրեանց ունելով՝ արարին զայսպիսի հանդիսաւոր թաղումն, որ է մեծի նշան սիրոյ եւ հաւատարմութեան՝ որ առ նմա. եւ յիրաւի է, արդարութիւնն իսկ պահանջէր առնել զայսպիսի թաղումն, այնպիսոյ իմաստնոյ հանճարեղի բարունապետի եւ նախնոյ մեծի Աբբային:

ՅԻՇԱՏԱԿԻ ԽՈՀԵՐ

ՀԱՅՈՑ ԿՂԶԻԻՆ 250ԱՄԵԱԿԸ

(1717 - 1967)

Է.

Ս. ՂԱԶԱՐԻ ԵՐՐՈՐԴ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

(1946-1966)

Համաշխարհային պատերազմի աւարտին (1945), մինչ կը դադրէր որոտն ահա թնդանօթներուն եւ ահարկու ոռմբերուն, եւ յաղթական աղբեր՝ դրաւուած հողամասերը կը բաժնէին իրարու մէջ, նոր սահմաններ դժելով երկիրներու, Ս. Ղազար եւս կը տիրանար նոր հողերու՝ ընդարձակելով իր սահմանները:

Յաղթանակի մեծ տօն կը կատարուէր Հայոց Կղզիին մէջ ալ. եւ աղբերն այնքան չէին հրճուեր՝ իրենց հայրենի երկրին սահմաններուն ընդարձակումով, որքան Միւրթար Աբբաօր որդիները՝ իրենց փոքրիկ կղզեակին հողերուն կըրկնապատկումով:

Միւրթարեան հայրենիքը, պանդխտութեան մէջ ստեղծուած փոքրիկ Հայաստանը կը մեծնա՛ր... Սակայն՝ առանց սուրի եւ թնդանօթի:

Գաղափարի ու մշակոյթի յաղթանակն էր՝ որ ձեռք կը բերուէր, իտալական կառավարութեան ու մանաւանդ վենետիկի քաղաքական իշխանութիւններու ազնիւ բարեացակամութեամբ:

Արդարեւ, կէս դարէ ի վեր, Ս. Ղազարի Հայրերը ջանքեր կը թափէին ընդարձակելու համար կղզին. եւ այդ՝ ոչ թէ լոկ բուռ մը աւելի հող ունենալու տենչով, նիւթական շարժումի դիւրութեան համար, կամ վանքի որմերէն հեռացնելու համար համայնաքանդ խոնա-

ւութիւնը լճակի աղի ջուրերուն, այլ զուտ մշակութային նպատակներով:

Տարիները կը սահէին, եւ Միւրթար Աբբաօր կղզեակը, հակառակ 1815ի ընդարձակումին, օրէ օր աւելի կը նեղնար՝ կարծէք: Հայրենիքէն եւ փիւռքէն հասնող պարբերաթերթեր եւ օրագիրներ, ամէն տեսակ հրատարակութիւններ ու գիրքեր, ձեռագիրներ եւ մըշակութային այլ գանձեր ու գոհարներ, հին դրամներ, մետաղներ, արժէքաւոր նկարներ եւն... կը դիզուէին, կը գրաւէին մինչեւ անգամ վանականներու խրցիկները: Ս. Ղազարի շէնքերը նեղ կու գային՝ այդ բոլորը արժանաւոր կերպով ու վայելչաբար դասաւորելու, ցուցադրելու համար տասնեակ հազարաւոր ամէնազգի այցելուներուն, որոնք խուռնեամ կ'ողջունէին Հայոց Կղզին՝ ամէն տարի:

Եւ ահա՛ պահանջը ընդարձակուելու:

1945 թուականի աշնան, երբ՝ զինադադարի առիթով՝ համօրէն հասարակութիւնը Ս. Ղազար վերադարձած էր, կը սկսին առաջին շփումները պետական իշխանութիւններու հետ, ուսումնասիրելու համար ընդարձակումի մը հնարաւորութիւնը:

Բայց, ինչպէս Միւրթարի օրերուն - եւ պատմութիւնը յաճախ կը կրկնուի - Միաբանութեան կողմէ կատարուած առաջին



Ս. Ղազարի արեւելեան անկիւնի նոր սահմանագիծը (Լիտույի ամենամեծ մասը) 1947ի Ապրիլին:

դիմումը, ցաւալիօրէն, հիմնովին կը մերժուի, այն պատճառաւորութեամբ՝ թէ Վենետիկի լճացամաքային կացութիւնը ամենեւին չէր ներքեր ուր կտոր մ'իսկ նոր հողամաս աւելնար լճակին վրայ. օրէնքները խիստ էին այդ մասին. քարի կտոր մ'իսկ նետել արգելուած էր ջուրերուն մէջ:

Հայուն անխորտակելի կամքն էր հարկաւոր, որ հաւատքի հուրով առկայծ ու Նախախնամութեան վրայ անխախտ յոյսով արծարծուն, Միթարի որդիներուն պիտի ներշնչէր յարատեւութիւն, դժուարութիւններու դիմաց չկասելու:

Վենետիկի լճակի ջուրերուն հսկող պետական Յանձնախումբին անդամներուն հետ տեւական խորհրդակցութիւններու ընթացքին, երեւան կու գայ նոր գաղափար մը, որ կնճռոտ հարցին բանալին կ'ըլլայ. առաջարկել կամ խոստանալ՝ սեփական ծախքերով այնքան հող փորել լճակի հեռաւոր ափերուն, որքան որ նոր հողամաս պիտի աւելնար Ս. Ղազարի վրայ, պահելու համար լճակի ջուրերուն հաւասարակշռութիւնը:

Միաբանութեանս կողմէ կատարուելիք այդպիսի առաջարկ մը, սակայն, հսկայական ծախսերու մտահոգութիւն մը կը ստեղծէր վանքին համար, մանաւանդ յետ-պատերազմեան շրջանի տնտեսական շատ անձուկ պայմաններուն տակ:

Պետական իշխանութիւններու հետ բանակցութիւններու ընթացքին, Միաբա-

նութեանս մեծապէս օգտակար եղած են Գրյ. Ճ. Սքարփա (խաւաքի դիտնական ու հեղինակաւոր վարդապետ մը, ժամանակին ուսուցիչ Մուրատ - Ռափայէլեանի մէջ՝ թուարանական ու բնաբանական դիտութիւններու), Ճրտ. Փոլաքքոյ, Ճրտ. Ծիլլէ, Փրոֆ. Փափալարտոյ, Ճրտ. Տ. Ալեասի, Ճրտ. Ճ. Փատովան, բոլորն ալ պետական բարձրաստիճան պաշտօնեաներ. յատկապէս Ճրտ. Մարիոյ Կայ, Միաբանութեանս ճարտարապետը, որ ուրիշ բոլին նուիրուած էր ընդարձակումի դատին, եւ մօտէն ուսումնասիրելով կըզգեակին բոլոր մանրամասնութիւններն ու վանքին պահանջները՝ ընդարձակումէն ետք կառուցուելիք շէնքերու հսկայական ու չքեղ ծրագիրներ պատրաստած էր, աշակցութեամբ Հ. Սորէն Տիլիդեան եւ Հ. Անդրէաս Գոկոլեան վարդապետներուն:

1946 թուականի միաբանական Ընդհ. Ժողովը իր քննութեան առարկայ կը դարձնէ Ս. Ղազարի ընդարձակումի առաջարկն ու ծրագիրը, բոլոր մանրամասնութիւններով, թեր ու դէժ պայմաններով ու առաւելութիւններով: Ժողովին ամէնէն հրատապ ու այժմէական հարցերէն մէկը կ'ըլլայ ասիկա: Երկար խորհրդակցութիւններէ ետք, մեծամասնութեան հաւանութեամբ՝ կ'որոշուի ընդարձակել փոքրիկ Հայաստանի սահմանները. *alea jacta est!*

Այդ թուականէն՝ կը սկսի Հայոց Կըզ-




Ս. Ղազարի արեւմտեան ափունքի նոր հողամասը, 1947ի Մայիսին:

դիին պատմութեան նոր շրջանը, որու աւանատես վկաներն ենք մենք:

Խանդավառ տրամադրութիւններով, իսկոյն աշխատանքները կազմակերպելու կը ձեռնարկէ Ս. Ղազարի Ընդհ. Աբրահայրը՝ Գրյ. Սրապիոն Ուլուհոճեան, կղզեակին ընդարձակումի ամենաջերմ պաշտպանը, իրեն աջ բազուկ ունենալով Միաբանութեանս Ընդհ. Քարտուղար՝ Ժրաշանն Հ. Եղիա Վրդ. Փէչիկեան, որուն վաստակը հսկայ եղած է՝ ընդարձակումի պետական հրամանագիրները ձեռք ձգելու, եւ հինաւուրց երազն իրագործելու նիւթապէս:

Հայոց կղզեակի նոր պատմութեան առաջին էջին վրայ, ոսկեղէն տառերով հարկ է դրոշմել այդ զոյգ վաստակաւորներուն անունները, երախտագիտութեան եւ յարգանքի դափնեպսակներով:

Պետական իշխանութիւններու հետ համաձայնութիւնը կնքելէն ետք, հաւանական թոյլտուութեան հրամանի վրայ, 1946ի Նոյեմբեր 2ին, Վենետիկի ջուրերու հսկող (Magistrato alle Acque) իշխանութեան ենթապաշտօնեաներէն մէկը՝ Ա. Մարինեթի, քանի մը աշխատակիցներով վանք կու գայ: Հայոց Կղզիին նոր սահմանները պիտի գծէր՝ լճակին վրայ ցիցեր հաստատելով: Բոլոր վանականներու աչքերը ուղղուած էին դէպի Լիտույ, եւ ուրախութեան արցունքներով կը հետեւէին փոքրիկ նաւակին, որ վանքի հիւ-



Ս. Ղազար էր անկերպարան եւ անպատրաստ 1949ի Փետրուար 27ին (հարաւ-արեւելեան հողամաս):

սիս-արեւելեան անկիւնէն դէպի հարաւ-արեւելք, այսինքն՝ Լորտ Պայրենի բլուրէն դէպի Լիտույ առաջանալով, 62 մեղր հեռաւորութեան վրայ, լճակի ջուրերուն մէջ կը խրէր առաջին նշանաձողը: Լճակին խորութիւնը այդ տեղերը սովորաբար 1-1.50 մեղր է:

Յուրտ եւ հողմաշունչ օր մըն էր. լըճակն՝ ալեկոծ. հազիւ կարելի էր սանձել նաւակը: Պայքար մըն էր իսկապէս՝ հողերու այս ընդարձակումը...

Ընդարձակումի ամէնէն լայն կէտը՝ 62 մեղր. յաջորդաբար, նաւակը կը յառաջանար դէպի հարաւ, կամ աւելի ճիշտ՝ դէպի հարաւ-արեւմուտք, 205 մեղր երկարութեան մը վրայ (Լիտույի հանդէպ) ու կը տնկուէին զանազան նշանացիցեր. 62 մեղրի վրայ՝ ամէնէն հեռաւորը վանքի պատերէն, յաջորդաբար՝ 55 մեղրի վրայ, 50ի վրայ, 45, հուսկ վերջինը՝ 35 մեղր հեռաւորութեան վրայ:



Ս. Ղազարի արեւմտեան ափունքին քափուած հողերը, 1947ի Յունիսին:

Նաևակը կը դառնար դէպի արեւմուտք, դէպի Վենետիկ, վանքի առաջակողմի հողամասը դժեւում. այս անգամ 25 մեդր հեռավորութիւն մը կը սահմանուէր վանքի հին ամրոցին. երկարութիւն նոր հողամասի՝ շուրջ 130 մեդր. փոքրիկ ծովախորշ մը թողլով վանքի բուն արեւմտեան ամրոցին, նոր նաւակայքի եւ սանդուղներու յատկացուելիք:

Ընդարձակումի իրադրոժման պահուն՝ փոքրիկ այլ հպումներով ու ձեւաւորումներով, Ս. Ղազարի նոր հողամասը պիտի ունենար 13.446 քա. մեդր տարածութիւն. իսկ կղզին ամբողջ պիտի ունենար 30.416 քառակուսի մեդր ընդարձակութիւն:

Ուրեմն, քառապատիկը՝ Միւթարի դառն ամայի կղզեակին, եւ աւելի քան կրկնապատիկը՝ 1815ին ընդարձակուած կղզին:

Ս. Ղազարի վերջին ընդարձակումը թոյլատրող վճիռը կը կրէ 22 Յունուար 1949 թուականը (թիւ 26629)*:

Ծրագիրը դրուած էր. շուրջ 14.000 քառակուսի մեդր տարածութեան վրայ՝ հարկ էր հողեր լեցնել... 28.000 խորանարդ մեդր:

Տաժանելի եւ երկա՛ր աշխատութիւն, որ պիտի տեւէր աւելի քան երեք տարի (1947-1950): Գործերուն վրայ կը հսկէր վանքի Հայրերէն կազմուած մարմին մը (Հ. Քերոբէ Զրաքեան, Հ. Թէոփոր Սիրունեան, Հ. Ղազար Սրապիոնեան, Հ. Եղիա Փէչիկեան, Հ. Անդրէաս Ֆոկոլեան), միշտ վառ պահելով յարաբերութեան դիժը՝ պետական պաշտօնեաներուն

հետ, որոնք ամէն կերպով աջակից եղան այդ դժուար դրոժին յաջողութեան:

Ս. Ղազարի շնորհուած ծովամասը հողով լեցնելու դրոժութեան համար, անհրաժեշտ էր նախ առժամեայ պարիսպ կամ շրջապատ մը, որպէսզի ջուրը ալեկոծութիւններու ժամանակ կամ մակընթացութեան ու տեղատուութեան շարժումներով՝ չառնէր չտանէր դիզուելիք հողերը, ինչպէս պատահեցաւ առաջին օրերուն: Եկան նաւակներ, հողեր թափեցին. յաջորդ օրը անոնց հետքն անգամ չէր մնացած: Ուստի, վանքին աղբսանքին ընդառաջելով, պետական իշխանութիւնները, իրենց ծախքով ու միջոցներով, հայթայթեցին քարուկիր հսկայ զանդուածներ, որոնք այդ օրերուն կը դոյնային՝ պատերազմի շրջանին կառուցուած հաստահիմն ապաստանարաններու քանդումէն. մեծամեծ քարեր, կրաղիւսի վիթխարի բեկորներ Ս. Ղազար հասան՝ հսկայ բեռնանաւակներով: Սահմանադիժերը զօրացան:

Այնուհետեւ, դարձեալ պետական իշխանութիւններու բարեհաճ կարգադրութեամբ, Ս. Ղազար կղզին նշանակուեցաւ հասարակաց վայր (Sacca pubblica), որու շուրջ կարելի էր թափել շինարարական աւերակոյտեր, փլատակներ: Բայց ուրիշ՝ ճարել պէտք եղած հսկայական զանդուածները:

Պատերազմի շրջանին, Վենետիկի ջրանցքները՝ երկար ատեն անխնամ մնացած էին ու լեցուած տիղմով. շինարարական ընկերութիւններ ձեռնարկած էին,

այդ օրերուն, հարկըաւոր ջրանցքները խորացնելու, դիւրացնելու համար նաւակներու երթեւեկը. դիւրին էր իրենց համար, եւ նոյնիսկ ձեռնտու, այդ բոլոր ցելը բերել Ս. Ղազար, փոխանակ շատ աւելի հեռուններ տանիլ՝ բաց ծով թափելու: Միւթարեան Հայրերը արթնամբ տութիւնը կ'ունենան առաջարկելու որ այդ բոլոր հողերը դան ու թափուին Ս. Ղազար:

Եւ այսպէս, աւելի քան երեք տարի (1947-1950) մեծ ու փոքր նաւակներ, հետզհետէ բերին ու բերին անսահման մթերք ու աւերակոյտ, բա՛ առ բա՛ թափելու Ս. Ղազարի շուրջ: Սկիզբները՝ անկանոն կերպով թափեցին, աջ ու ձախ, սկսելով վանքի շրջապատէն: Միայն էր այդ դրութիւնը. հարկ էր հողերը նախ թափել նոր դժուած շրջապատին հեռաւոր ծայրամասերուն, եւ հետզհետէ ետ քաշուիլ՝ դէպի վանքին պատերը ու դուրս ելլել ջրանցքներէն: Շինարարական ընկերութիւնները ստիպուեցան իրենք իրենց ծախսով առժամեայ ջրանցքներ բանալ՝ իրենց իսկ թափած հողերուն ընդմէջէն, կանոնաւոր կերպով լեցնելու համար ծրագրուած հողամասը: Հարկ էր նաեւ սահարկել դրեթէ ամէն մէկ նաւակի հետ, եւ անոյշ խոստումներով՝ համոզել աշ-

խատաւորները, որ քիչ մը աւելի ծայրամասին վրայ բաց մնացած տեղերը տանէին ու թափէին նորահաս ցելը: Ոգեսպա՛ռ աշխատանք:

Տխու՛ր էր, այդ շրջանին, Հայոց Կղզիին կերպարանը. ջրանցքներ, քարակառներ, հողակոյտեր... ամայու-թիւն ամէն կողմ:

«Եւ Ս. Ղազար էր աներեւոյթ եւ անպատրաստ». բայց, այդ թո՛հ ու բո՛հին վրայ՝ կը շրջէր վանականներու պայծառ յոյսը...:

1949ի վերջերը՝ կ'աւարտէին ընդարձակումի հիմնական աշխատանքները. դիզուած էր բաւարար հող, միապաղաղ եւ հսկայ ցամաք մը ձեւացնելով, շատ նըման՝ պատառոտուն լաւայի ամայութեան մը, որ կը դրկէր հին կղզիին հարաւային ու արեւմտեան ափերը:

Հարկ էր հիմա անկերպարան այդ հողազանդուածին տալ դեղ ու պերճանք, ինչ որ հսկայական զոհողութիւններ պիտի արժէր վանքին:

Եւ ամէնէն առաջ՝ պարսպապատումի մտահոգութիւնը կու դար շփոթեցնել յուսալի վանականները: Շինարարական երկու ընկերութիւններ մինչեւ երեսուն միլիոն լիրէթի կը հասցնէին ծախսերուն նախահաշիւը, ինչ որ ծանր բեռ մը պիտի



Վենետիկէն կը հասնին տղմաբարձ նաւակներ. նկարուած 1949ի Յուլիսին:

*) Այս հրամանագրով, արտօնութիւն ունէինք ընդարձակելու ներկայ նաւարանն ալ (ութանկեան տակ - Belvedere), ինչպէս յաջորդաբար կը կարգադրէր 1955ի Դեկտ. 16ի նախարարական վճիռը, այսպէս որ մեծցուած հողամասը պիտի ըլլար 13.551 քա. մեդր: Բայց, որովհետեւ անկարելի եղաւ ընդարձակել նաւարանը, Վենետիկի քաղաքական իշխանութիւնները (Genio Civile եւ Capitaneeria) ստիպուեցան պաշտօնական քարտէսները սրբապահել, յատուկելով չլեցուած մասը, եւ ըստ այնմ Հոռմէն նախարարական նոր վճիռ ելաւ, 1957 Ապրիլ 2 թուակիր, հաստատելու համար կացութիւն-

նը (Gazzetta Uff. թիւ 133, 27 Մայիս 1957), ստորագրուած Ելեմուտքի եւ Ծովային Առեւտրական Նախարարութեանց իշխանութիւններէն: Նոր հողամասի հարաւ-արեւմտեան անկիւնն ալ ստիպուեցանք ջրանցքով մը անջատել միւս հողերէն, ազատ թողլու համար մեծ ջրախողովակները, որոնք ընդծովեայ ուղիով՝ ջուր կը փոխադրեն Վենետիկէն Լիտոյ: Հողի ընդարձակման ծրագրային աշխատանքներու միջոց՝ անտեսուած էր այս կէտը. հողաշարժարումի պահուն էր որ բողբոջ ջուրի ընկերութիւնը, նոր ծախսերու ենթարկելով վանքը:

ըլլար Միաբանութեան, որ չունէր ոչ մէկ տրամադրելի դուժար:


Ճիշտ Միւրթար Աբրահամ նման, որ առանց դրամի ապաստանած էր նախ Մոռէա-Մեթոն (Յունաստան) եւ ապա Վենետիկ, ու յաջողած հսկայ վանքեր կառուցանել, իր որդիներն ալ ահա նոյն ճամբէն կը քալէին: Յոյսն ունէին թէ հաւատքով եւ արիութեամբ սկսուած գործը՝ չէր կարելի առկախ թողուլ. մանաւանդ որ կառավարական հրովարտակին համաձայն՝ եթէ 25 տարուան շրջանին չպարսպուէր նոր հողամասը, առկա պիտի անցնէր պետութեան:

1950ի Յունուարին, կատաղի փոթորիկ մը կ'ուռնէր լճակին ալիքները, որոնք հիւսիսային ահեղաշունչ քամիին թափով կը հարուածէին նորաստեղծ կղզիին քարակարկառ շրջապատը, եւ հիւսիս-արեւելեան կողմէն հսկայ ճեղք մը բանալով՝ կը սպառնային լափել դիզուած հողամասը:

Վանքը վճռականօրէն կ'որոշէ ա'լ ժամանակ չկորսնցնել:

Յանձնախումբ մը կ'անցնի Միւրթարի հարցը կը ներկայացուի Խտալահայ դպրութի ծանօթ ազգայիններուն, Մուրատ-Ռափայէլեանի նախկին սաներուն, որոնք իրենց տունը նկատելով Ս. Ղազարը, եւ անոր ընդարձակումը՝ պարծանք հայութեան, սիրայօժար կ'աջակցին. քիչ ժամանակի մէջ նշանակելի դուժար մը կը հանդանակուի. օգնութեան կը հասնին Պուէնոս Այրէսի ազգայիններն ու բարեկամները. նմանապէս Փարիզէն եւ այլ կողմերէ նախկին սաներ սիրայօժար ձեռք կ'երկարեն փոքրիկ Հայաստանի պարբերալսչութեան: Երեք տարուան ընթացքին՝ վանքի ազգային եւ օտար այցելուներու նուէրները կը յատկացուին պարիսպի շինութեան աշխատանքներուն. Խտալացի բարեկամներ ալ սիրով կը մասնակցին այս նուիրական գործին:

Մասնաւոր տետրակի մը մէջ կը պահ-ուի ցանկը բոլոր ծանօթ եւ անծանօթ նուիրատուներուն, որոնց՝ այս առիթով՝ անդամ մը եւս թող հասնի մեր խորունկ եւ սրտագին շնորհակալութիւնը:



Ս. Ղազարի կերպարանքը՝ 1950ի սկիզբները, դիտուած՝ հարաւ-արեւմուտէն (պարիսպները տակաւին չեն շինուած):




Սկիզբ պարիսպի շինութեան, 1950ի Ապրիլին.
Լորտ Պայրընի ձիթեմիներու բլուրէն դէպի Լիտոյ:

Նուիրատուութիւններու դուժարը կը հասնի շուրջ 15 միլիոն իտլ. լիրէթի, որ բաւարար կ'ըլլայ ամբողջ պարիսպի շինութեան:

Միաբանութիւնը մտահոգուած՝ շինարարական ընկերութիւններու մեծադուժար նախահաշիւներէն, կ'որոշէ աւելի համեստ ոյժերով՝ բայց քաջաւարժ գործաւորներով աշխատանքի ձեռնարկել: Եօթն էր անոնց թիւը սկզբնական շրջանին, եւ յաջորդաբար հասաւ

մինչեւ տասներեքի: Արձանատետրին մէջ՝ նշանակուած են նոյնիսկ անոնց օրավարձերը. երեք գլխաւորներուն (ղեկավար, հիւս, որմնադիր) հազարական լիրէթ. միւսներուն՝ 800ական, վրան աւելցնելով բնակութիւն ու կերակուր: Վանքի ստորին յարկին մէջ, մեծ սենեակ մը կը յատկացուէր գործաւորներուն՝ հոն գիշերելու համար, աշխատանքը արագ առաջացնելու նպատակով: Արդարեւ, ամառ ժամանակ, յաճախ առտուան ժամը 5ին կը լըծ-



Պարիսպի շինութիւնը առաջացած է 62 մեդր. նոր հողամասին հարաւ-արեւելեան ծայրը՝ ութանկիւն բացուածք մը կը յօրինուի, 1950ի Յունիսին:

ուէին անոնք աշխատանքի, օգտուելով օդին զովութենէն եւ ջուրին տեղատուութենէն: Օրական՝ ութը ժամ աշխատանք: Դժուարին հարցերէն մէկն ալ, այդ շրջանին, աշխատաւորներու պահանջները զոհացնելն էր, կերակուրի տեսակէտով:

Նոր հողամասին վրայ կառուցուեցաւ փայտաշէն տնակ մը, հոն կուտակելու համար աւազ, դերաններ, տախտակներ, կրաղիւսի պարկեր, երկաթէ ձողեր, խըճաքար եւ բանուորական այլ գործիքներ:

Աշխատանքներուն կը հսկէր Հ. Թէոդոր Վրդ. Սիրունեան. շինանիւթերու հայթայթումով կը զբաղէր Հ. Ղազար Վրդ. Սրապիոնեան. քաղաքական իշխանութիւններու հետ կապը կը պահէր Հ. Եղիա Վրդ. Փէշիկեան. իսկ գործերու ընդհանուր ուղղութիւն կու տար Ճրտ. Պետրոս Պապիկեան, Տրապիզոնցի, նախկին սան Մուրատ-Ռափայէլեան վարժարանի, որ երբեմն գալով Թրիեսթ քաղաքէն, ուր կը պաշտօնավարէր, իմաստուն եւ օգտակար խորհուրդներով թեւ ու թիւ կուէր կ'ըլլար մեզի:

Աշխատանքները սկիզբ առին 1950ի Մարտի վերջերը, սկսելով Լորտ Պայրէնի

բլուրէն (հին հողամասին հարաւ-արեւելեան անկիւնէն), երկարելու համար դէպի հարաւ (դէպի Լիտոյ), ճիշտ 62 մեդր. անկիւնին վրայ ստեղծուեցաւ 12 մեդր շրջանակով ութանկիւն մը. եւ անկէ դէպի հարաւ-արեւմուտք 195 մեդր. հոն ալ ութանկիւն մը՝ յար եւ նման առաջինին. անկէ դէպի արեւմուտք՝ 130 մեդր եւս. անկիւնին վրայ, 5 մեդր բացուածքով փոքրիկ վեցանկիւնի կառոյց մը հաստատուեցաւ ցցուն. ապա պարիսպը դարձաւ դէպի ներքին նաւամատոյցի ծովախորշը՝ 44 մեդր երկար քարափով. համագումար նորաշէն պարիսպի երկարութեան՝ 458 մեդր. վրան աւելցնելու է, սակայն, շուրջ 60 մեդր ալ. հին պարիսպի մէկ մասին նորոգութիւնը:

Իսկ պարիսպին բարձրութիւնն ու անոր կազմը... այդ աւելի բարդ հարց է: Նախ՝ չորսէն հինգ մեդր երկարութեամբ, կաշնի հաստ ցիցերու հաստատում՝ լճակին ցեխին մէջ, խիտ առ խիտ, զոյգ շարքերով, ամբողջ պարիսպի երկարութեան. յետոյ առաջին խաւ՝ երկաթախառն խըճակրաղիւսի (պեթոն արմէ), կէս մեդր բարձրութեամբ. այս մասը գրեթէ միշտ

կը մնայ ջուրին տակ ծովամոյն. շինութեան համար ալ՝ ստիպուած էին տախտակներով ամրափակել եւ ջուրը պարպել՝ եթէ երբեք մակընթացութեան շրջանին հանդիպէր այդ մասին շինութիւնը. հիմնախաւին վրայ, երկու խաւ եւս, երկուքն ալ կէս մեդրնոց, բոլորը շղթայուած իրարու հետ, երկաթներով ու մեծամեծ ցցուն քարերով. հոսկ՝ վրան կը բարդուի կրկնաշար աղիւսէ որմը, 1,50 մեդր բարձրութեամբ, յաճախ ընդհատուած դեղեցկահիւս սիւնաշարքերով եւ սիւնակներով, ստեղծելու համար ներդաշնակ յօրինուած մը զանազանեալ:

Միաժամանակ կը կատարուէին ընդարձակուած հողամասին հարթելու աշխատանքները, որուն համար կղզիին մէջ սարքուած էր փոքր երկաթուղի մը, 250 մեդր երկարութեամբ եւ երկաթեայ երեք կառքերով, փոխադրելու համար հող եւ շինանիւթեր:

Կառուցուեցաւ նոր նաւամատոյց մը վանքի ճակատին, դիւրացնելու համար քաղաքին հետ շոգենաւային հաղորդակցութիւնը. ուրիշ աւելի փոքրիկ մը՝ Լիտոյի հանդիպակաց. շինուեցան ըմպելի ջուրի խողովակներու, անձրեւաջուրերու եւ կոյաջուրերու նոր ձամբաներ եւ սարքաւորումներ. տնկուեցան հարիւրաւոր ծառեր եւ այլ բոյսեր, կանաչադարձելու համար ամայութիւնը. ստեղծուեցան ծառուղիներ, յօրինուեցան ձամբաներ, որոշ մասեր ալ առժամապէս յատկացուեցան բանջարանոցի եւ այգիի. աշակերտներուն բաժնին կցուեցաւ ընդարձակ բակ մը, նախկինէն շուրջ երեք անգամ աւելի մեծ:

1952ի սկիզբները աւարտեցան աշխատանքները. Ապրիլին՝ խաչանիշ դեղեցիկ սիւն մը կանգնեցաւ վանքի հրապարակին վրայ, նուիրատուութեամբ Ճրտ. Պ. Պապիկեանի. եւ իր աշխատակիցներու կազմակերպութեամբ՝ յօրինուեցաւ ամբողջ հրապարակը, տքնաջան աշխատանքով:

Նոյն տարուան Մայիսին, վանքին մէջ պատուոյ ընդունելութիւն տրուեցաւ քաղաքին պետական անձնաւորութիւններ-



Պարիսպին շինութիւնը կ'երկարի դէպի հարաւ-արեւմուտք, 1950ի Սեպտեմբերին:

րուն, որոնք, մօտաւորապէս 15 հոգի, այնքան բարեացակամօրէն՝ ամէն դիւրութիւն ու ձամբայ ցոյց տուած էին այս հսկայ աշխատանքն իրագործելու համար:

Իսկ ամառուան շրջանին, երբ բոլորովին աւարտեցան դեղեցկաշէն հրապարակին աշխատանքներն ալ, Գրպծ. Աբրահօր օրհնութեամբ՝ բացում կատարուեցաւ՝ վանքի մայր դրան առջեւ:

Այդ օրը՝ մասնաւոր շնորհակալութեան եւ աղօթքի օր հռչակուած էր վանքին համար. միաբանները, երախտադիտական զգացումներով տողորուած, փառք կու տային Աստուծոյ, որ՝ ինչպէս Մխիթարի օրերուն, 230 տարի ետք ալ, յաջողութիւն պարգեւած էր այս հսկայ գործին: Աստուծոյ մատն էր, որ զգալիօրէն ցոյց էր տուած Ս. Ղազարի ձամբան՝ բազմաթիւ բարերար անձերու, բոլորին սիրտը ուղղելով դէպի Հայոց Կղզին, որ ահա նորահարսի նման կ'ելլէր Վենետիկի կապոյտ ջուրերէն, դրախտանման դեղեցկութեամբ:

Նախախնամութիւնն ալ օգնութեան էր հասած. մինչ այդ՝ փոխուած էին նաեւ Վենետիկի ջուրերու եւ լճակի կազմութեան մասին սկզբունքները. լճակին ու-



Հ. Թեոդոր վ. Սիրունեան կը հսկէ պարիսպի շինութեան
աշխատանքներուն (1950 Սեպտ.) :

ընչ կողմերն ալ հողերով լեցնելու դադարը դարձաքան էր. այնպէս որ կառավարութիւնը շատ կակուղ աչքով նայեցաւ այն մեր պարտականութեան վրայ, որուն համաձայն՝ ստիպուած էինք ընդարձակուած հողամասին քանակով հող փոխելու, լծակի հեռաւոր ասիներուն վերայ. իշխանութիւնները դոհացան որոշ վճարումով մը. ինչպէս նաեւ նոր հողամասը վանքի սեփականութիւն դարձնելու համար՝ սահմանեցին խորհրդանշանական գումար մը, եւ Ս. Ղազարի նոր հողերը դարձան սեփականութիւն Վենետիկի Հայ վանականներուն :

* * *

Այս հիմնական աշխատութիւններու կողքին եւ զուգահեռաբար, վանքին մէջ ու վանքէն դուրս, անպակաս էին՝ այս շրջանին իսկ՝ դրական ու դաստիարակական ձեռնարկները :

1947ին մեծահանգէս տօնուեցաւ «Բաղմալէպ»ի հարիւրամեակը, որ զուգադիպած ըլլալով պատերազմի տարիներուն (1843-1943), յետաձգուած էր արդարացիօրէն : Այդ առիթով, «Գեղունի»ներու շարքին վրայ կ'աւելնար հոյակապ հատոր

մը եւս, նուիրուած հայկական հին արուեստի եւ ձեռագորական գեղեցիկ նմոշներու :

1949-1950ի շրջանին, դարձեալ մեծ շուքով եւ համազգային տարածքով կ'ողկոչուէր, ամբողջ տարի մը, վանքին ու Մխիթարեան վարժարաններուն մէջ, երնչ. Մխիթար Աբրահամ մահուան 200ամեակը, մասնակցութեամբ՝ հայ եւ օտար, քաղաքական ու եկեղեցական մեծամեծ իշխանութիւններու եւ սփռուքի մտաւորական ներկայացուցիչներու : Դարձեալ լոյս կը տեսնէր «Գեղունի»ի չքեղ հատոր մը, ինչպէս նաեւ «Բաղմալէպ»ի մասնագիտական բացառիկ մը :

Կրթական մարզին մէջ՝ Մխիթարեան Հայրերը, հազիւ պատերազմը դադարած, լծուած էին տենդադին աշխատանքի : Սեւրի Սամուէլ-Մուրատեանը եւ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանը, պատերազմի աւերներէն նորոգուած, դարձեալ տաքուկ բոյներ էին դարձած՝ հայ մանկութեան : Հալէպի եւ Եգիպտոսի Մխիթարեան Վարժարանները կը դիմէին դէպի փայլուն վերելք. հեռաւոր Պուէնոս Այրէսի մէջ նոր վարժարան մը բանալու ճիգեր կը թափուէին : Միաբանութեան Աբրահամը կը

փութար հիւսիսային Ամերիկա, ուր կը գտնէր բաղմալիւ սիրայօժար նուիրատուներ, որոնք՝ Հալէպի մէջ սեփական նոր վարժարան մը շինելու նպատակին կ'աջակցէին սիրայօժար :

Իսկ Լեռնալիբանանի բարձունքներուն վրայ, Մուրատ-Ռափայէլեանի նախկին սան՝ Տիար Յովհ. Փեմպէճեանի բարերարութեամբ կը բացուէր փոքրիկ վանատուն ընծայարան մը, 1949ի Յունուարին, նորանոր սերունդներ հասցնելու համար Ս. Ղազար, որուն ընդարձակումի լուրը՝ ամէն կողմ խանդավառութիւն էր ստեղծած :

Եւ ահա, դադարի տխուր շրջանէ մը ետք, Ս. Ղազարի նորընծայարանն ալ կը լեցուէր եռանդուն ու ժիր պատանիներով, որոնք նոր խանդով կու գային լեցնել Մխիթարի Տունը, արծարծելով նոր յոյսեր :

Գրական մարզին մէջ, այդ տարիներուն, նոր թափ կ'առնէր «Բաղմալէպ»ը. կը ծնէր նոր հայաթերթ մը՝ «Մխիթարեան Ընտանիք» (Հոկտ. 1949), Հ. Վահան Վ. Յովհաննէսեանի ձեռնարկով, ոսկեղէն շրթայ մը նետելու համար դադուիէ

դադուի սիրուած մեր սիրելիներուն միջեւ : Դպրոցական դասագիրքերու՝ «Սեւան» ընթերցարաններու շարքեր, «Գրական Յոլքեր»ու ծաղկաքաղներ, Պետրոս Հայրապետ Կրէտի կտակի նպաստով լոյս տեսնող հատորներ, նախնեաց մատենադրութեան նշխարներ կ'իջնէին հրապարակ, Մխիթարեան տպարանէն : Կը հրատարակուէր Գրպ. Սրապիոն Ուլուհո-ճեանի աշխատասիրութեամբ կատարուած Աւետարանի աշխարհաբար ընտիր թարգմանութիւնը, գեղատիպ ու նկարազարդ :

Ինչպէս կը նշմարուի, Ս. Ղազարի հոգին ընդարձակումը՝ նոր խանդ եւ աւելն էր ներշնչած Մխիթարեան Հայրերուն, ամէն ասպարէզի մէջ : «Հայրենիքը կը մեծնա՛յ» դադափարը ինքնին կեանք է ու խրախոյս աշխատանքի :

* * *

Բայց Ս. Ղազարի բարեգաղութի աշխատանքները, հողի ընդարձակումի օրերուն իսկ սկսած, շարունակուեցան, դըլ-խաւորապէս պարսպապատումէն ետք :

Ս. Ղազարի Հայրերը սովորութիւնն ունին, բացառիկ շնորհներ եւ յաջողու-



Հ. Ղազար վրդ. Սրապիոնեան կը հսկէ համոզ շինանիւքերու վրայ
(1950, Հոկտեմբեր) :



Ս. Ղազար՝ 1952ի սկիզբները, պարսպապատ. հողերն հարքուած են. բուսականութիւնը սկսած է:

Թիւններ ընդունելու պարագային, դեղա-
զարդել իրենց եկեղեցին:

Արդարեւ այս շրջանին ալ, առաջին
գործերէն մէկը կ'ըլլայ եկեղեցւոյ որմե-
րուն ոսկեղրուազ խճանկարներու շինու-
թիւնը, նախաձեռնութեամբ Հ. Ղեւոնդ
Վրդ. Տայեանի: Նախ՝ հայ սուրբերու
դեղանկար բոլորակները (1949), յաջոր-
դաբար՝ Մխիթար Աբբաճօր դամբանի ա-
ռաստաղը (1950) եւ աւագ բեմի խորքը,
հանդերձ մարմարապատումով ստորին
մասերուն (1951), հուսկ՝ դասի և ատեա-
նի որմերը, կամարները (1953-54): Այս
շինութիւններուն համար՝ պարտականու-
թիւն է երախտագիտութեամբ յիշել ա-
նունները Մանուկեան ընտանիքի և Գրպժ.
Ստեփան Ստեփանեանի, որոնք ազնիւ
նուիրատուութիւններով միշտ քաջալերե-
ցին այս ձեռնարկը:

1953-54ի շրջանին՝ ընդարձակուեցաւ
նորընծայարանի մատուռը, զետեղելով
մարմարակերտ նոր խորան, հայաքանդակ
ոճով, Ճրտ. Յարութիւն Գաղանճեանի
առաջնորդութեամբ, եւ եռանդուն ջանքե-
րով Հ. Խաչատուր Վրդ. Վրթանէսեանի:

Այդ առիթով, աշակերտներու յարկարա-
ժինին յարկերուն մէջ կատարուեցան վե-
րածումներ սենեակներու եւ դասարան-
ներու:

1954-56ի շրջանին՝ նորոգուեցան եւ ա-
ւելի արդիացան վանքի ձմեռնային ջե-
ռուցումի եւ լուսացարանային սարքաւո-
րումները: Նորոգուեցան ու յարգարուե-
ցան Մխիթար Աբբաճօր մեծ սանդուղին
եղերքի որմերը (սեղանատան մօտ) վար-
դագոյն մարմարի գեղեցիկ շերտերով:

1960ին՝ եգիպտահայ բարերար Տիար
Արմենակ Մեթմէթեանի նուիրատուու-
թեամբ, մարմարի գեղադրուազ շերտե-
րով զարդարուեցաւ եկեղեցւոյ աւագ բե-
մի յատակը, Մխիթար Աբբաճօր գերեզ-
մանին շուրջ: Իսկ Պր. Եղ. Ս. Պարան «Ի
յիշատակ մօրն Նունուֆարայ Տիւնեան»
նորոգեաց զյատակ վիմաց աւանդատան»:
Զարդարուեցան նաեւ Ս. Խաչի եւ Ս. Գրի-
գոր Լուսաւորչի խորաններուն որմերը,
դեղնադոյն ընտիր մարմարներով:

1960ի Օգոստոսին՝ խանդավառօրէն տօ-
նեցինք Ս. Ղազարի վերջին ընդարձակու-
մին խրախոյս ու քաջալիր կանգնող Գրպժ.



1952, Մայիս 29 - Յետ ընդունելութեան՝ ի պատիւ վեներաբլի Հանրային աշխատութեանց
մասնախմբի անդամներուն (Magistrato alle acque եւ Genio Civile), որոնք մեծապէս
նպաստեցին Հայոց Կղզիի ընդարձակումին:

Զախէն աջ, ոտքի. - Հ. Գաբրիէլ Վ. Լազարեան, վանքի հաշուապալ՝ Rag. M. Schileo, Հ.
Եղիա Վ. Փէշիկեան, ձրտ. Dino Alessi, ուրիշ պաշտօնայ մը՝ կիսադէմքով, ձրտ. Gio-
vanni Padovan, Գրպ. Giuseppe Scarpa, ձրտ. Alessandro Polacco (Ispettore Gen. del
Genio Civile), Cav. Zille (կիսադէմքով), Գրպժ. Սրապիոն Արքաիայր Ուլուիոնեան,
Gioacchino Pappalardo (կիսադէմքով), Dott. Bazan, ձրտ. Giuseppe Tortarolo (Pre-
sidente del Magistrato alle acque), Ետեւր՝ Հ. Ներսէս Տէր-Ներսէսեան, ուրիշ պաշտօ-
նայ մը, Հ. Քերոբէ Վ. Զրաբեան, Cav. Lucerna.


Առաջին կարգ, ծնրադիր. - ձրտ. Pavanello, ուրիշ պաշտօնայ մը, Assistente Antonio
Marinetti.

Սրապիոն Ուլուիոնեանի արքայութեան
25ամեակը, որ պսակուեցաւ բազմավա-
տակ Աբբաճօր Արքեպիսկոպոսական օծու-
մով՝ բարեհաճ կարգադրութեամբ Ն. Ս.
Յովհաննէս ԻԳ. Քահանայապետի:

1962ի Օգոստոսին՝ զետեղուեցաւ Մխի-
թար Աբբաճօր պղնձակերտ մեծ արձանը,
վանքի մուտքի հրապարակին վրայ (փո-
խադրելով նախկին խաչասիւն կոթողը),
յիշատակելի փառապանծ հանգէսով մը,
որուն մասնակցեցան երկու ծիրանաւոր-
ներ, Վսեմ. Ծիր. Գրիգոր-Պետրոս Աղա-

ճանեան և Ծիր. Ծ. Ուրպանի՝ Պատրիար-
քը, Վեներաբլի Կուսակալ Նահանգապետ
ու Քաղաքապետը, բարձրաստիճան այլ
իշխանութիւններու ներկայութեամբ:
Բացառիկ ու աննախընթաց այդ հանդէ-
սին մասնակցեցաւ նաեւ Վեներաբլի քա-
ղաքապետական նուագախումբը:

Այդ տարիներուն՝ ընդարձակուեցաւ
նաեւ տպարանը (1956), շուրջ 25 մեզր
երկայնք ունեցող թեւով մը, 5 մեզր լայն-
քի վրայ. այսպէս, կարելիութիւն տըր-
ուեցաւ տպարանը օժտելու արդիական



Կղզին կը սկսի կերպարամբ առնել, 1951ի Ապրիլ ամսուն:

նորանոր գործիքներով (տողաչարներ, օֆսէթ), դրաչարային դարակներով, լուսանկարչական նոր սարքերով (երկնորոշում, զինկատպում): Մխիթարեան հրատարակչականը նոր դարկ ստացաւ այդ շարժումով: Լոյս տեսան «Բազմա-վէպ»-ի բացառիկներ, գրեթէ ամէն տարի, ճոխ ու գիտական բովանդակութեամբ. 1960ին՝ Գրպծ. Սրապիոն Ուլուհոճեանի արքեպիսկոպոսական ձեռնագրութեան յիշատակին նուիրուած, 1961ին՝ Ալիշանի մահուան 60ամեակին ձօնուած, 1962ին՝ Մեսրոպ Մաշտոցի 1600ամեակին, 1963ին՝ Սայեաթ Նովայի, 1965ին՝ Ապրիլեան Նահատակներուն, 1966ին՝ Ոսկան Վարդապետի յիշատակին եւ Աստուածաշունչի տպագրութեան 300ամեակին:

1966ին Նոյեմբեր 1ին լոյս տեսաւ «Հայկական Մանրանկարչութիւն» չքեղ հատորը, տպարանապետ ու վաստակաւոր Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի անխոնջ ջանքերով: Յետ-պատերազմեան շրջանի 20ամեայ գործունէութեան փառապսակն էր ասիկա, որ քանի մը տարուան տքնաջան աշխատանք էր արժած, դառնալու համար իսկական կոթող հայկական մշակոյթի պանծացումին եւ ծաւալումին՝ միջազ-

գային շրջանակներու մէջ: Ընդարձակուած Ս. Ղազարի խանդավառ աշխատանքներուն ու մանաւանդ մտաւորական ջանքերուն՝ գեղեցիկ պտուղն էր այդ հատորը:

* * *

Ու մօտ էր 1967 թուականի արշալոյսը: Վանականներն համօրէն, Ս. Ղազարէն ու արտասահմանէն, խանդավառ տրամագրութիւններով կը պատրաստուէին ողջունելու իրենց կղզեակին 250ամեակը, գեղեցիկ ծրագիրներ մշակելով հանդէսներու եւ տօնակատարութիւններու:

Բայց, ահաւոր փորձանք մը կը սպառնար անոնց. պիտի վերադառնէին ճգնաժամային օրեր, ինչպէս Մխիթար Մեթոնի մէջ, եւ կարծես իրենց երջանիկ բոյնը պիտի ենթարկուէր ջարդի ու թալանի:

Եւ աւա՛ղ... փոթորկոտ գիշեր մը (1966, Նոյեմբեր 3-4) գիշեր մը սարսափի ու ջրհեղեղի, Վենետիկի լճակը կ'ուռէր, ջուրերը լեռնանման կը կուտակուէին, կը բարձրանային, եւ աննախընթաց ողողում մը, հազար տարիէ ի վեր չտեսնուած, կը լափէր քաղաքն ամբողջ, քանի մը ժամուան ընթացքին. ջուրը կը նստէր սպառնալից ամբողջ 13 ժամ:

Ս. Ղազարի նորաչէն պարիսպները կը



Ս. Ղազար՝ 1955ի Ապրիլին:

գիմադրէին ամուր, կը մնային անխորտակելի. սակայն, ջուրի հսկայ թափը կը զօրանար, կը բարձրանար եւ ահեղ ալիքները սանձարձակ կը խուժէին ներս, ողողելով վանքին ստորին յարկն ամբողջ, մուտքի մայր դրան առջեւ գլելով 1,13 մեդրի բարձրութիւնը, մեծամեծ վնասներ հասցնելով Հայոց կղզիին. (տե՛ս ասոնց նկարագրութիւնը Բազմ. 1967, Թ. 1-2, էջ 41-46):

Փոքրիկ Հայաստանին սպառնացող վտանգը՝ բոլոր Հայութեան ուշադրութեան կ'արժանանայ իսկոյն:

Աղէտին լուրը շուտով կը հասնի Միւրան ու արտասահման, մինչեւ Ամերիկա եւ Հայաստան, եւ ահա՛, սրտեռանդն աղղակիցներ, թէ՛ վշտակցական քաջալերիչ նամակներով, նոյնիսկ հեռաձայնով, եւ թէ վեհանձն նուէրներով՝ ինքնաբերաբար կը փութան օգնել Միաբանութեան:

Արտասահմանի բոլոր հայ թերթերու խմբագրութիւնները, սրտի մեծ ցաւով, արձագանք կու տան ողողումի դժբախտ գէպքին:

Փարիզի «Յառաջ» օրաթերթի Պատուարժան Խմբագրութիւնը, ամէնէն ա-

ռաջ, հանգանակութեան կը ձեռնարկէ, ինքնարուխ կոչով մը, որ ջերմ արձագանք կը գտնէ Փրանսահայ հոծ զանգուածներու մէջ:

Միւրանի հայ գաղութը, գլխաւորութեամբ Գաղութային Միութեան, «Հայ Տուն»-ի եւ Մշակութային Միութեան իր կազմակերպութիւններուն, ինքնաթիւով աղնուութեամբ կոչ կ'ուղղէ իտալաքնակ բոլոր Հայերուն՝ փութալու օգնութեան:

Ս. Ղազարի օգնութեան գիմելու շարժումը կ'անցնի ծովերը, կը հասնի մինչեւ մերձաւոր Արեւելք, Լիբանան, Եթովպիա, Արձենթին, Մ. Նահանգներ:

Լիզպոնի Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը, Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան Նիւ Եօրքի կեդրոնը, բարեգործական այլ հաստատութիւններ, Տիկնանց խնամակալութիւններ, հայրենակցական միութիւններ, աղնուահոգի անհատներ, աշխարհի ամէն կողմերէն, կը բերեն իրենց պատրաստակամ մասնակցութիւնը՝ Ս. Ղազարի վնասները փութով դարձանելու մտահոգութեամբ:

Եթովպիոյ Հայոց Գաղութային Ժողովը եւ Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը, Մուրատ-Ռափայէլեանի նախկին սանե-

ընդհանուր առմամբ չեն փոխարինվում, իրենց ցանկացած նամակին կը կցեն նշանակելի օժանդակությունները:

Լիբանանահայ դադուկները ալ խանդավառութեամբ արձագանգ կու տայ Պէյրութի խմբագիրներու հաւաքական կոչին, փութալու համար ի նպաստ Ս. Ղազարի:

Միացեալ Նահանգներու մէջ, անձնանուէր նախաձեռնութեամբ Վիեննայի միաբան Հ. Ղուկաս Վ. Առաքելեանի՝ կը կազմակերպուի հանգանակիչ Յանձնախումբ մը. իսկ Տիար Արթիւր Ասլանեանի ազնիւ ջանքերով սկիզբ կ'առնէ օգնութեան նոր շարժում մը, որոնց ջերմ կոչերուն իսկոյն ընդառաջ կու դնեն բազմաթիւ ազնուահոգի համակիրներ ու բարեկամներ, Ս. Ղազար հասցնելով նշանակելի գումար մը:

Բացառիկ յուզում ու քաջալերանք կ'ազդէ վանքին՝ Ս. Էջմիածնի դահակալ Վեհ. Վաղգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վշտակցական հեռագիրը, որուն կը յաջորդէ երկրորդ մը՝ սրտաբուխ ներատուութեան մը հետ:

Անթիլիասի դահակալը, Վեհ. Խորէն Ա. Կաթողիկոս եւս, դէպի Եւրոպա կատարած իր ուղեւորութեան ընթացքին՝ կ'այցելէ Ս. Ղազար (24-26 Մայիս 1967), եւ յայտնելով իր մեծ վիշտը՝ ի լուր աղետաբեր ողորումին, քաջալերական ջերմ խօսքեր կ'ուղղէ Միաբանութեանս, սիրայօթար նուիրատուութեամբ մը:

Յաւակցական բազմաթիւ նամակներ կը հասնին Հայաստանի գիտական ու մշակութային կեդրոններէն:

Հայաստանի ձայնասփիւռը, իր կիրակնօրեայ արտասահմանեան հաղորդումներու ընթացքին, յուզումով ու ցաւով կը խօսի դժբախտ աղէտի մասին, եւ լաւագոյն մաղթանքներ կ'ուղղէ Հայոց Կղզիի Հայրերուն:

Ս. Ղազարի միաբանները չափազանց կը յուզուին, յատկապէս այն երեւոյթին համար՝ որ առանց վանքին կողմէ հրատարակուած կոչերու, ո՛չ միայն Միաբանեան սաներ եւ Մուրատ-Ռափայէլեանի նախկին աշակերտներ, այլ ամբողջ հայ

Ժողովուրդը՝ ինքնայօթար ու սրտաբուխ պատրաստակամութեամբ՝ օժանդակութեան ամուր թումբ մը կը բարձրացնէ, սանձելու Ազրիականի խրոխտ ալիքները:

Փոխադարձ շնորհակալութեան ջերմ կոչը կը սփռուի աշխարհի չորս ծագերուն: Հայ Ժողովուրդին նուիրած լուսաները կը ծառայեն ոչ միայն նիւթապէս զեղազարդելու Հայոց կղզեակը՝ իր նախկին վայելչութեամբ, այլ կու տան շատ աւելի բարձր արդիւնք՝ բողբոջելով հայ մշակոյթի անգաստանին մէջ, երախտագիտութեան ծաղիկներով:

Յորեկանի հանգէտները կը յետաձգուին ու միաբանները կը լծուին վերանորոգումի ծանր աշխատանքին, առաջնորդութեամբ նորընտիր Արքայօր. Գրպօ. Հմայեակ Վարդ. Կէտիկեանի, որու ուսերուն կը ծանրանար Միաբանութեան դերը՝ երկու տարիէ ի վեր:

1967ին ամառը՝ կը նորոգուին եկեղեցին, աւանդատունը, գերեզմանոցը. կը դարձանուն տպարանին վնասները. յաջորդ տարին՝ նորընծայարանը՝ հիմնովին, եւ ապա ժառանգաւորներու վարժարանը, վանքին ճակատը, հիւրասենեակները, խոհանոցը:

Ջրհեղեղէն ետք, ինչպէս ծիածան յուսատու, նորոգութիւններու զուգընթաց, հիմերը կը դրուին նոր Ձեռագրատան մը՝ Տիար Պօղոս Իսպէնեանի վեհանձն նուիրատուութեամբ (11 Մայիս 1967):

Միաժամանակ ծրագրերն են կը մշակուին, նոր եւ ընդարձակ դրադարանի մը շինութեան, ըստ արդիական պահանջներու, ազնուահոգի այլ բարերարներու նախաձեռնութեամբ:

1967ի Սեպտ. 8ին, վանական ամփոփ շրջանակի մէջ, կ'ողեկոչուի Հայոց Կղզիին 250ամեակը, շնորհակալութեան եւ երախտագիտութեան իղձերով:

Եւ չարաբախտ ողորումը պատմութեան կ'անցնի:

Հայոց Կղզին՝ նոր յոյսերով կ'ողջունէ իր 250ամեակը, փայլուն ապագայի հեռանկարին տակ:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ «ԳԱՆՈՒՍ ԿԻՎՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ» ՆՊԱՍՏՈՎ
PUBLIE AVEC LE CONCOURS DE LA «FONDATION CALOUSTE GULBENKIAN»

Direzione - Amministrazione - Abbonamenti — Isola San Lazzaro - 30100 Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia

